Կարգապահական գործ թիվ ԿԳ-25094

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՏԻԳՐԱՆ ԱՇՈՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի և Կարեն Խալաթյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ դիմողի ներկայացուցիչ [redacted],

քննության առնելով փաստաբան Տիգրան Աշոտի Սարգսյանին (արտոնագիր՝ թիվ 2004), **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)**, կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

[redacted]ը **(այսուհետ՝ Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ Պալատ)**, հայտնել է, որ իր իրավունքներն ու շահերը պաշտպանելու համար դիմել է փաստաբան Տիգրան Սարգսյանին:

Դիմողի պնդմամբ, Փաստաբանը պետք է զբաղվեր ավտոտնակի իրավական կարգավիճակի և դրա օրինականացման հետ կապված խնդրով, ինչի կապակցությամբ կազմվել է պայմանագիր, որի շրջանակներում նա պարտավորվել է դատարանում

Թիվ ԿԳ-25094-2-Ա
01.04.2026թ.

ներկայացնել Դիմողի շահերը տվյալ քաղաքացիական գործով մինչև դատարանի վճիռ կայացնելը:

Դիմողը հայտնել է, որ Փաստաբանը սկզբում կապի մեջ է եղել, սակայն գործի վերջին փուլում բազմիցս չի պատասխանել իր զանգերին և տարբեր պատճառներով չի ներկայացել թիվ ԵԴ/29765/02/19 քաղաքացիական գործով մի քանի դատական նիստերի:

Դիմողը հայտնել է, որ Փաստաբանը չի ներկայացել 25.06.2025 թվականին նշանակված դատական նիստին, ինչի արդյունքում վերջինս մնացել է առանց պաշտպանության:

Դիմողի պնդմամբ, վերջինս կապ է հաստատել Փաստաբանի հետ, որպեսզի պարզաբանի, թե ինչն է պատճառն այդ վարքագծի, ինչի կապակցությամբ փաստաբանը հայտնել է, որ շատ ծանրաբեռնված է, ինչպես նաև հավելել է, որ քաղաքացիական գործերով չի զբաղվում, թուլացել է, վերջին նիստից առաջ առաջարկել է գտնել ավելի լավ մասնագետ, եթե ոչ՝ ապա նա կներկայանա 01.10.2025թ. նիստին:

Ըստ Դիմողի՝ կասկածներ ունի, որ Փաստաբանը չունի գործի նյութերը և չի վարում հատուկ թղթապանակ, քանի որ 01.10.2025 թվականի դատական նիստին նա խնդրել է ծանոթանալ գործի նյութերին:

Դիմողը հայտնել է, որ 11.10.2025 թվականին կապ է հաստատել Փաստաբանի հետ և խնդրել վերադարձնել գումարի մի մասը, սակայն Փաստաբանը խոսակցության ընթացքում հնչեցրել է վիրավորական արտահայտություններ. «[redacted]»:

Վերոգրյալի հիման վրա, Դիմողը խնդրել է հարուցել կարգապահական վարույթ փաստաբան Տիգրան Սարգսյանի նկատմամբ:

Պալատի սպասարկող բաժնի աշխատակիցը 08.01.2026թ. Դիմողին հասցեագրել է նաև կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ ներկայացնելու մասին պահանջ, որին ի պատասխան Դիմողը նշել է, որ իր կողմից բոլոր ապացույցները ներկայացվել են, սակայն խնդրել է իր նկատմամբ Փաստաբանի վիրավորական արտահայտությունները բառացի չմեջբերել հետագայում կայքէջում, ինչպես նաև գումարի վերադարձի քննարկման հարցն է բարձրացրել:

Հանձնաժողովի նիստի ընթացքում Դիմողը պնդել է իր դիրքորոշումը:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Տիգրան Սարգսյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն [redacted]ի դիմումի վերաբերյալ, սակայն Փաստաբանը որևէ դիրքորոշում կամ ապացույց չի ներկայացրել և չի հերքել Դիմողի կողմից ներկայացված պնդումները:

Պալատի սպասարկող բաժնի աշխատակիցը 08.01.2025թ. Փաստաբանին հասցեագրել է նաև կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ ներկայացնելու մասին պահանջ, որին ի պատասխան՝ Փաստաբանի կողմից ներկայացվել է բացատրություն և համառոտագիր:

09.01.2026թ. էլեկտրոնային փոստի միջոցով, իսկ 16.01.2026թ. փոստային եղանակով Տիգրան Սարգսյանը Պալատի աշխատակազմի ղեկավարին նույնաբովանդակ դիմում է հասցեագրել, որով նշել է, որ չի ստացել կարգապահական վարույթի հիմքերը՝ անձի դիմումը և կից փաստաթղթերը, ինչի արդյունքում բացատրություն չի ներկայացրել: Խնդրել է ներկայացնել վարույթի նյութերը՝ դիրքորոշում հայտնելու համար:

12.01.2026թ. Պալատի աշխատակազմի սպասարկող բաժնի աշխատակից Շուշան Հարությունյանի կողմից Փաստաբանին էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվել է վարույթի նյութերը:

Այնուհետև, 16.01.2026թ. դիմումը ստանալուց հետո Պալատի կարգապահական գործերը համակարգող Մերի Տերտերյանը 19.01.2026թ. կրկին Փաստաբանին ուղարկել է կարգապահական գործի նյութերը, որից հետո սահմանված ժամկետից ուշ՝ 30.01.2026թ. միայն Պալատ է մուտքագրվել Փաստաբանի բացատրությունը, որի համաձայն՝ 6 տարի ներկայացրել է [redacted]ի, և միշտ լավ հարաբերությունների մեջ են գտնվել: Ըստ Փաստաբանի՝ վերջին շրջանում որդին՝ [redacted]ն է դժգոհություններ հայտնել իրենց, ինչի ի պատասխան Փաստաբանն առաջարկել է հետ վերադարձնել գումարը և փոխադարձ համաձայնությամբ դադարեցնել աշխատանքը, սակայն [redacted]ը պնդել է, որ Փաստաբանը շարունակի գործը վարելը: Ինքը հայտնել է, որ մասնագիտացումը փոխել է, սակայն դա արել է ի պատասխան դժգոհությունների:

Փաստաբանը նաև նշել է, որ վճռի հրապարակումից հետո Դիմողը զանգել է իրեն և պահանջել վճարված 200.000 ՀՀ դրամի կեսը:

Փաստաբանը նշել է, որ վերջինս որևէ կարգապահական խախտում չի կատարել, պայմանագրով սահմանված պարտավորությունները կատարել է բարեխղճորեն, իսկ [redacted] վիրավորական արտահայտությունը եղել է բարկության արդյունք:

Փաստաբանն որևէ ապացույց, ինչպես նաև բաց թողնված ժամկետը հարգելի համարելու միջնորդություն չի ներկայացրել:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 19.12.2025թ. թիվ 325-Ա/ԿԳ-25094 որոշման հիման վրա փաստաբան Տիգրան Սարգսյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի

վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 2.2.2, 2.7.1, 2.11.1, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ::

26.12.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից Շուշան Հարությունյանին (**այսուհետ՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 26.02.2026թ. կազմել է եզրակացություն: Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-6-րդ կետերում նշված փաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 26.02.2026թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 01.04.2026թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը և Դիմողի հայրը՝ [redacted], 01.07.2019թ. կնքել են փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի առարկան է հանդիսացել [redacted] ավտոտնակի նկատմամբ նրա անվամբ իրավունքի ճանաչմանն ուղղված աշխատանքների կատարումը: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի կողմից ներկայացված պայմանագրի պատճենով:*

2. 11.09.2019թ. Փաստաբանի կողմից ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել դիմում, որը ստացել է ԵԴ/29765/02/19 գործի համարը, ընդունվել է վարույթ, և նշանակվել է դատական նիստի օր: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

3. Փաստաբանի կողմից ներկայացված դիմումի առարկան եղել է հետևյալը. «բավարարել սեփականության իրավունքով գույքի տիրապետման փաստը հաստատելու պահանջի մասին սույն դիմումը՝ հաստատելով հայցվոր [redacted] Առուստամյանի կողմից ք. Երևան, Շիրակի 30/8 հասցեում տեղակայված ավտոտնակը սեփականության

իրավունքով տիրապետելու փաստը»: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

4. Թիվ ԵԴ/29765/02/19 քաղաքացիական գործով փաստաբան Տիգրան Սարգսյանը հանդիսացել է [redacted]ի ներկայացուցիչը: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի կողմից ներկայացված փաստաթղթերով, ինչպես նաև «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

5. Փաստաբանը չի ներկայացել թիվ ԵԴ/29765/02/19 քաղաքացիական գործով 06.12.2022թ., 21.11.2023թ., 29.04.2024թ., 30.09.2024թ. և 25.06.2025թ. նշանակված դատական նիստերին: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի կողմից ներկայացված դատական նիստերի արձանագրությունների պատճեններով:*

6. Թիվ ԵԴ/29765/02/19 քաղաքացիական գործով Դատարանի 22.10.2025թ. կայացրած վճռով [redacted]ի դիմումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ ք. Երևան, Շիրակի 30/8 հասցեում տեղակայված ավտոտնակն ինքնակամ կառույց է: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

7. Փաստաբանն, ի պատասխան Դիմողի այն պնդմանը, որ դատական նիստերին չներկայանալու պատճառով վերջինս մնում է միայնակ և անպաշտպան, նշել է, որ շատ ծանրաբեռնված է այլ գործերով և «շնչելու ժամանակ չունի», ինչպես նաև հայտնել է, որ 4 տարի է՝ քաղաքացիական գործերով չի զբաղվել և «թուլացել է»: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի 30.01.2026թ. գրությամբ:*

8. Փաստաբանը Դիմողին հորդորել է միայնակ գնալ դատարան և վերցնել գործի նյութերը՝ քննարկելու համար: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի կողմից ներկայացված հեռախոսազրույցի ձայնագրությամբ:*

9. 11.10.2025թ. Դիմողի հետ հեռախոսային խոսակցության ընթացքում Փաստաբանը նրան դիմել է հետևյալ կերպ. «[redacted]»: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի կողմից ներկայացված հեռախոսազրույցի ձայնագրությամբ:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Տիգրան Սարգսյանը փաստաբան է հանդիսանում 28.11.2015 թվականից, և 2021-2026թթ. ընկած ժամանակահատվածում նրա նկատմամբ 2 անգամ հարուցվել է կարգապահական գործ, որոնցից մեկով տույժը մարված չէ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Տիգրան Սարգսյանն ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.2, 2.7.1, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման համար: Միաժամանակ, Կանոնագրքի 2.11.1 ենթակետի խախտման հատկանիշների մասով հարուցված կարգապահական վարույթն ենթակա է կարճման:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում

միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հետևանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Տվյալ դեպքում, փաստաբան Տիգրան Սարգսյանին վերագրում է բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու, հանձնարարության կատարման ընթացքի և Դիմողին հետաքրքրող հարցերին չպատասխանելու, ինչպես նաև Պայմանագրի լուծումից հետո գումարը չվերադարձնելու վարքագիծը:

Վերոգրյալի համատեքստում, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցին.

- ***արդյո՞ք Փաստաբանն ունեցել է բարձր մասնագիտական պատրաստվածություն,***
- ***արդյո՞ք Փաստաբանը բարեխիղճ իրավական օգնություն է ցուցաբերել Դիմողին,***
- ***արդյո՞ք Փաստաբանը ձեռնարկել է ողջամիտ ջանքեր Դիմողի հանձնարարությունն արագ և արդյունավետ կատարելու համար,***
- ***արդյո՞ք Փաստաբանն ունեցել է Դիմողի քաղաքացիական գործի վերաբերյալ կազմված փաստաբանական գործ (թղթապանակ),***

- ***արդյո՞ք Փաստաբանը հանձնարարության կատարման ընթացքի մասին կանոնավորապես տեղեկացրել է Դիմողին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին,***
- ***արդյո՞ք Փաստաբանը Դիմողի հասցեին կատարել է այնպիսի արտահայտություն, որով կասկածի տակ է դրել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:***

Համադրելով սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրություններն ու ապացույցները մեջբերված նորմերի ու հիմնավորումներին, ինչպես նաև անդրադառնալով դրանց վերը ներկայացված հարցադրումների համատեքստում, Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանը չի դրսևորել բարձր մասնագիտական պատրաստվածություն, Դիմողին բարեխիղճ իրավաբանական օգնություն չի ցուցաբերել, ողջամիտ ջանքեր չի գործադրել իր ստանձնած իրավաբանական օգնությունը պատշաճ իրականացնելու ուղղությամբ, չի տեղեկացրել վստահորդին աշխատանքի ընթացքի մասին, փաստաբանական գործ (թղթապանակ) չի կազմել, ինչպես նաև Դիմողի հասցեին կատարել է այնպիսի արտահայտություն, ինչը խաթարել է փաստաբանի և փաստաբանության նկատմամբ վստահությունն ու հարգանքը:

Կանոնագրքի 2.7.1 և 3.5.5 ենթակետերի խախտման մասով.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, ինչպես նաև պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.1-ին ենթակետի համաձայն՝ *փաստաբանական գործունեության հասարակական-իրավական նշանակությունը փաստաբանից պահանջում է բարձր մասնագիտական պատրաստվածություն, օրենսդրության իմացություն և գործնական փորձ, փաստաբանական գործունեության մարտավարության մեթոդների և միջոցների, ինչպես նաև հռետորական արվեստի տիրապետում:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, արդյունավետորեն, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,
բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,
գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,
դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Նշվածով պայմանավորված, Օրենքով և Փաստաբանի վարքագծի կանոնագրքով փաստաբանի համար սահմանվում են նաև մի շարք այլ պարտականություններ, որոնց շարքում առանձնակի նշանակություն ունի բարձր մասնագիտական պատրաստվածությունը և անհրաժեշտ գործնական փորձի առկայությունը, որի հետ էլ փոխկապակցված է վստահորդի նպաստավոր շահերից ելնելու և բարեխղճորեն և ժամանակին վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու պարտականության պատշաճ կատարումը: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ կարող են լինել վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Համադրելով վերը ներկայացված նորմերը և հիմնավորումները գործի փաստական հանգամանքներին՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանը և [redacted] 01.07.2019թ. կնքել են փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի առարկան է եղել [redacted]ի ավտոտնակի նկատմամբ վերջինիս իրավունքի ճանաչմանն ուղղված աշխատանքների կատարումը: Հաստատվել է նաև, որ Փաստաբանի կողմից դատարան ներկայացված դիմումի առարկան եղել է ք. Երևան, Շիրակի 30/8 հասցեում տեղակայված ավտոտնակը սեփականության իրավունքով տիրապետելու փաստը հաստատելու պահանջը:

Հանձնաժողովը կարևոր է համարում ընդգծել, որ սույն կարգապահական վարույթի շրջանակներում չի վերագնահատվում թիվ ԵԴ/29765/02/19 քաղաքացիական գործով կայացված վճռի իրավաչափությունը և Հանձնաժողովը չի փոխարինում դատարանին՝ ընտրված դատական պաշտպանության եղանակի դատավարական գնահատման հարցում: Միաժամանակ, դատարանի կողմից արձանագրված այն հանգամանքը, որ դիմումը մերժվել է ավտոտնակն ինքնակամ կառույց լինելու պատճառաբանությամբ, էական նշանակություն ունի Փաստաբանի մասնագիտական վարքագիծը գնահատելու տեսանկյունից:

Դիմողի կողմից ներկայացված խնդիրը վերաբերել է ավտոտնակի իրավական կարգավիճակին, դրա օրինականացմանը կամ այդ գույքի նկատմամբ իրավունքի ճանաչմանը, ապա Փաստաբանից պահանջվել է ոչ միայն դիմում ներկայացնել դատարան,

այլև նախապես գնահատել, թե տվյալ փաստական իրավիճակում ընտրված դատական պաշտպանության եղանակն որքանով է կարող հանգեցնել վստահորդի ակնկալած իրավական արդյունքին: Այդ գնահատումը պետք է ներառեր նաև այն հարցը, թե արդյո՞ք ինքնակամ կառույցի առկայության պայմաններում խնդիրն ենթակա է եղել լուծման անմիջապես դատարան դիմելու միջոցով, թե նախ անհրաժեշտ է եղել դիմել իրավասու վարչական մարմնին, այդ թվում՝ քննարկել ինքնակամ կառույցի օրինականացման կամ վարչական ընթացակարգերի կիրառման հնարավորությունը:

Այլ կերպ՝ Հանձնաժողովի գնահատման առարկան ոչ թե միայն այն է, որ դատարանը հետագայում մերժել է դիմումը, այլ այն, որ շուրջ վեց տարի շարունակվել է դատական գործընթաց այնպիսի պահանջով, որի արդյունավետությունը գործի փաստական հիմքերից ելնելով առնվազն խնդրահարույց է: Գործում առկա նյութերով չի հաստատվում, որ Փաստաբանը վստահորդին ժամանակին և պատշաճ կերպով պարզաբանել է ընտրված պաշտպանության եղանակի ռիսկերը, դրա հնարավոր անարդյունավետությունը, վարչական կամ այլ իրավական ընթացակարգերի կիրառման անհրաժեշտությունը կամ դրանց չկիրառման հետևանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբանի մասնագիտական պարտականությունների բարեխիղճ և որակավորված կատարումն ենթադրում է ոչ միայն դատական փաստաթուղթ կազմելը և ներկայացնելը, այլև վստահորդի խնդրի իրավական բնույթի ճիշտ գնահատումը, պաշտպանության արդյունավետ միջոցի ընտրությունը, ընտրված ուղու հնարավոր հետևանքների պարզաբանումը և գործի ընթացքի նկատմամբ հետևողական վերահսկողությունը: Եթե գործի փաստական հիմքերից բխում է, որ ընտրված դատական պաշտպանության միջոցը կարող է չլինել արդյունավետ կամ բավարար, փաստաբանը պարտավոր է այդ մասին իրազեկել վստահորդին և առաջարկել իրավաչափ ու նպատակահարմար այլ ընթացակարգեր:

Սույն գործով Փաստաբանի վարքագիծը գնահատելիս Հանձնաժողովը հաշվի է առնում նաև, որ Փաստաբանը չի ներկայացել թիվ ԵԴ/29765/02/19 քաղաքացիական գործով 25.06.2025թ. նշանակված դատական նիստին: Դատական նիստերին առանց որևէ պատճառի չներկայանալը, ինքնին, անհամատեղելի է վստահորդին իրավական օգնություն ցույց տալու՝ ողջամիտ, բարեխիղճ, ժամանակին և հետևողական կատարման պահանջի հետ, հատկապես այն դեպքում, երբ Փաստաբանը հանդիսացել է գործով ներկայացուցիչ և պարտավոր էր ապահովել վստահորդի շահերի պաշտպանությունը դատական քննության ընթացքում:

Բացի այդ, Փաստաբանն, ի պատասխան Դիմողի այն պնդումների, որ դատական նիստերին չներկայանալու պատճառով վերջինս մնում է միայնակ և անպաշտպան, նշել է, որ շատ ծանրաբեռնված է այլ գործերով և «շնչելու ժամանակ չունի», ինչպես նաև հայտնել է, որ

4 տարի է՝ քաղաքացիական գործերով չի զբաղվել և «թուլացել է»: Հանձնաժողովը նշված արտահայտությունները չի դիտում որպես Փաստաբանի մասնագիտական պատրաստվածության բացակայությունը ինքնուրույն ապացուցող միակ հիմք: Սակայն դրանք, համադրվելով գործի մյուս հանգամանքների հետ, հիմնավորվում է, որ Փաստաբանը չի ապահովել ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը:

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբանի ծանրաբեռնվածությունը, մասնագիտական ուղղվածության փոփոխությունը կամ տվյալ իրավունքի ճյուղով որոշակի ժամանակ չզբաղվելը չեն կարող արդարացնել արդեն իսկ ստանձնած հանձնարարության ոչ պատշաճ կատարումը: Եթե Փաստաբանը չի ունեցել բավարար ժամանակ, հնարավորություն կամ մասնագիտական պատրաստվածություն քաղաքացիական գործը պատշաճ վարելու համար, ապա վերջինս պարտավոր էր այդ մասին ժամանակին և հստակ տեղեկացնել վստահորդին, պարզաբանել դրա հնարավոր հետևանքները և ապահովել, որ վստահորդը հնարավորություն ունենա իր իրավունքների պաշտպանությունը կազմակերպել այլ արդյունավետ եղանակով:

Այսպիսով, Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա է Կանոնագրքի 2.7.1 ենթակետի խախտում, քանի որ Փաստաբանը տվյալ գործով չի դրսևորել այն մասնագիտական պատրաստվածությունը, իրավական գնահատման կարողությունը և գործնական հետևողականությունը, որոնք պահանջվում են փաստաբանական գործունեության հասարակական-իրավական նշանակությունից: Միաժամանակ, առկա է նաև Կանոնագրքի 3.5.5 ենթակետի խախտում, քանի որ Փաստաբանը վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները չի կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված և ժամանակին:

Կանոնագրքի 3.6.1 ենթակետի խախտման մասով.

Կանոնագրքի 3.6.1-ին ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Սույն կանոնից բխում է, որ փաստաբանները ոչ միայն կրում են վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալու, այլ նաև տրամադրված օգնության կամ գործի ընթացքի մասին վերջիններիս տեղեկացնելու պարտականություն: Ընդ որում, փաստաբանի կողմից հենց այս պարտականության կատարումն է, որ հնարավորություն է տալիս վստահորդներին օրինակ տվյալ գործով փոխել իրենց դիրքորոշումը, մոտեցումները կամ նույնիսկ պահանջը: Վերջապես վստահորդի հարցերին պատասխանելը այն ողջամիտ ակնկալիքն է, որ յուրաքանչյուր վստահորդ ունի իր փաստաբանից:

Տվյալ դեպքում Դիմողը պնդել է, որ գործի վերջին փուլում Փաստաբանը պատշաճ կերպով կապի մեջ չի եղել իր հետ, չի պատասխանել իր զանգերին և անհրաժեշտ պարզաբանումներ չի տվել գործի ընթացքի վերաբերյալ: Միաժամանակ, Փաստաբանը կարգապահական վարույթի ընթացքում չի ներկայացրել որևէ ապացույց, որով կհաստատվեր, որ ինքը վստահորդին կանոնավորապես տեղեկացրել է հանձնարարության կատարման ընթացքի մասին կամ պատասխանել է նրան հետաքրքրող հարցերին:

Հանձնաժողովը գտնում է, որ Կանոնագրքի 3.6.1 ենթակետի խախտման հարցը գնահատելիս էական է ոչ միայն Դիմողի պնդումը, այլև այն, որ տեղեկացնելու պարտականությունը կրող Փաստաբանը չի ներկայացրել այդ պարտականության պատշաճ կատարումը հաստատող որևէ գրավոր կամ այլ ապացույց: Նման ապացույցներ կարող էին լինել, օրինակ, վստահորդին հասցեագրված հաղորդագրություններ, գրություններ, էլեկտրոնային նամակներ կամ այլ նյութեր, որոնցից կհետևեր, որ Փաստաբանը վստահորդին պարբերաբար տեղեկացրել է գործի ընթացքի մասին:

Փաստաբանի ծանրաբեռնվածությունը կամ այլ գործերով զբաղված լինելը չի կարող ազատել նրան վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին կանոնավորապես տեղեկացնելու պարտականությունից: Եթե Փաստաբանը չէր կարող ապահովել գործի պատշաճ ընթացքը կամ անհրաժեշտ հաղորդակցությունը, ապա պարտավոր էր այդ մասին ժամանակին և հստակ տեղեկացնել վստահորդին:

Վերոգրյալի հիման վրա Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա է Կանոնագրքի 3.6.1 ենթակետի խախտում:

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտման մասով.

Կանոնագրքի 2.2.2-րդ ենթակետի համաձայն՝ մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Նշված նորմի բովանդակությունից հետևում է, որ փաստաբանի պատշաճ վարքագծի պահանջը չի սահմանափակվում միայն դատարանում, պետական մարմիններում կամ հրապարակային հարթակներում դրսևորվող վարքագծով: Փաստաբանը պարտավոր է պահպանել պատշաճ վարքագիծ նաև վստահորդի կամ նրա ներկայացուցչի հետ հաղորդակցության ընթացքում, հատկապես, երբ այդ հաղորդակցությունը կապված է ստանձնած հանձնարարության, իրավական օգնության մատուցման կամ դրանից բխող հարաբերությունների հետ:

Տվյալ դեպքում հաստատվել է, որ 11.10.2025թ. Դիմողի ներկայացուցչի հետ հեռախոսային խոսակցության ընթացքում Փաստաբանը վերջինիս հասցեին հնչեցրել է վիրավորական և նվաստացնող բնույթի արտահայտություններ: Այն հանգամանքը, որ նշված արտահայտությունները հնչեցվել են հեռախոսազրույցի ընթացքում և ոչ թե հրապարակային միջավայրում, ինքնին չի բացառում Կանոնագրքի 2.2.2 ենթակետի կիրառումը: Հեռախոսային հաղորդակցության ձևը չի փոխում արտահայտությունների բնույթը և չի վերացնում փաստաբանի՝ զսպված, պատշաճ և մասնագիտական վարքագիծ դրսևորելու պարտականությունը:

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբանի և վստահորդի կամ վստահորդի ներկայացուցչի միջև առաջացած լարվածությունը, դժգոհությունը կամ վեճը չեն կարող արդարացնել փաստաբանի կողմից կոպիտ, վիրավորական կամ նվաստացնող արտահայտությունների օգտագործումը: Նման արտահայտությունները անհամատեղելի են փաստաբանի մասնագիտական կարգավիճակի հետ և կարող են օբյեկտիվորեն կասկածի տակ դնել փաստաբանի, ինչպես նաև փաստաբանության նկատմամբ վստահությունն ու հարգանքը:

Հանձնաժողովը կարևորում է, որ փաստաբանի նկատմամբ հանրային վստահությունը ձևավորվում է ոչ միայն դատարանում նրա ելույթներով կամ պաշտոնական փաստաթղթերով, այլ նաև վստահորդի հետ անմիջական շփման որակով: Հետևաբար, նույնիսկ ոչ հրապարակային, հեռախոսային հաղորդակցության ընթացքում վստահորդի կամ նրա ներկայացուցչի հասցեին վիրավորական արտահայտություն հնչեցնելը կարող է գնահատվել որպես փաստաբանի մասնագիտական վարքագծի չափանիշներին հակասող արարք:

Վերոգրյալի հիման վրա Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի կողմից Դիմողի հասցեին հնչեցված վիրավորական արտահայտությունները խաթարում են փաստաբանի և փաստաբանության նկատմամբ վստահությունն ու հարգանքը, ուստի Փաստաբանի վարքագծում առկա է Կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտում:

Կանոնագրքի 2.11.1 ենթակետի խախտման մասով.

Կանոնագրքի 2.11.1 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը կամ փաստաբանական գրասենյակը պարտավոր է յուրաքանչյուր քրեական, քաղաքացիական կամ վարչական վարույթի վերաբերյալ կազմել համապատասխան փաստաբանական գործ՝ թղթապանակ, որտեղ պետք է կցվեն վարույթի հիմնական նյութերը:*

Հանձնաժողովն արձանագրում է, որ նշված նորմի խախտումը հաստատված համարելու համար անհրաժեշտ է բավարար ապացույցներով պարզել, որ փաստաբանը տվյալ վարույթի վերաբերյալ փաստաբանական գործ չի կազմել կամ չի ապահովել վարույթի հիմնական

նյութերի կցումը համապատասխան թղթապանակում: Ընդ որում, նման եզրահանգումը չի կարող հիմնվել միայն Դիմողի կասկածի կամ ենթադրության վրա:

Տվյալ դեպքում Դիմողը հայտնել է, որ կասկածներ ունի, որ Փաստաբանը չունի գործի նյութերը և չի վարում համապատասխան փաստաբանական գործ: Որպես այդ կասկածի հիմք Դիմողը վկայակոչել է այն հանգամանքը, որ դատական նիստի ընթացքում Փաստաբանը խնդրել է ծանոթանալ գործի նյութերին: Այդուհանդերձ, Հանձնաժողովը գտնում է, որ դատական նիստում գործի նյութերին ծանոթանալու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելը ինքնին բավարար չէ հաստատված համարելու համար, որ փաստաբանը չի կազմել փաստաբանական գործ կամ իր մոտ առհասարակ չեն եղել վարույթի հիմնական նյութերը:

Հանձնաժողովը հաշվի է առնում նաև, որ Փաստաբանը 11.09.2019թ. դատարան է ներկայացրել դիմում, գործով հանդես է եկել որպես [redacted]ի ներկայացուցիչ, իսկ թիվ ԵԴ/29765/02/19 քաղաքացիական գործը շարունակվել է մի քանի տարի: Նշված հանգամանքները, թեև ինքնին չեն ապացուցում փաստաբանական գործի պատշաճ կազմված լինելը, սակայն միաժամանակ թույլ չեն տալիս միայն Դիմողի կասկածի և դատական նիստում գործի նյութերին ծանոթանալու խնդրանքի հիման վրա հաստատված համարել Կանոնագրքի 2.11.1 ենթակետի խախտումը:

Բացի այդ, գործի նյութերով չի հաստատվել, թե կոնկրետ որ հիմնական նյութերը չեն եղել Փաստաբանի մոտ, որ նյութերը չեն կցվել փաստաբանական գործին կամ ինչ ձևով է փաստաբանական գործի բացակայությունը դրսևորվել: Նման պայմաններում Կանոնագրքի 2.11.1 ենթակետի խախտման վերաբերյալ առկա կասկածները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Փաստաբանի:

Վերոգրյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի վարքագծում Կանոնագրքի 2.11.1 ենթակետի խախտման փաստը չի հաստատվել:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խնդիրներն են՝ վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից սույն օրենքի, փաստաբանների պալատի կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ.*

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել*

կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Օրենքի 39.10 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *Տուգանքի չափը սահմանում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը, որը չի կարող գերազանցել սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը: Տուգանքը փաստաբանը վճարում է փաստաբանների պալատի բյուջե:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը արձանագրում է, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի հիմնական խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանական էթիկայի նորմերին համապատասխանող վարքագծի ապահովումն է: Նշված խնդրի իրացման իրավական միջոցներից մեկը Հանձնաժողովի կարգապահական գործառույթն է, որը դրսևորվում է օրենքով և Հանձնաժողովի գործունեության կարգով սահմանված ընթացակարգով փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելով և լուծելով:

Օրենքով նախատեսված են կարգապահական պատասխանատվության այն միջոցները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանի նկատմամբ: Միաժամանակ, Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասով ամրագրված է, որ փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը, իսկ տույժ կիրառելիս Հանձնաժողովը պետք է հաշվի առնի խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը և փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Սույն պարագայում Փաստաբանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու իրավաչափ նպատակը Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից

օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Ընտրվող կարգապահական տույժը պետք է լինի այնպիսի միջոց, որը, մի կողմից, համարժեք արձագանք կհանդիսանա թույլ տրված խախտումներին, մյուս կողմից՝ չի գերազանցի կարգապահական պատասխանատվության նպատակներին հասնելու համար անհրաժեշտ սահմանը:

Հանձնաժողովը, անհատականացնելով Փաստաբանի կարգապահական պատասխանատվությունը, հաշվի է առնում, որ սույն գործով հաստատված խախտումները վերաբերում են փաստաբանի մասնագիտական պարտականությունների մի քանի առանցքային ուղղությունների: Մասնավորապես, Փաստաբանի վարքագծում հաստատվել են իրավաբանական օգնության ոչ պատշաճ, ոչ բավարար որակավորված և ոչ հետևողական մատուցման, վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին կանոնավորապես տեղեկացնելու պարտականության խախտման, ինչպես նաև վստահորդի ներկայացուցչի հետ հաղորդակցության ընթացքում փաստաբանի կարգավիճակին անհամատեղելի վիրավորական արտահայտություն հնչեցնելու հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ նշված խախտումները իրենց համակցությամբ չեն կրում ձևական կամ նվազ նշանակության բնույթ: Դրանք առնչվում են փաստաբան-վստահորդ հարաբերությունների հիմքում ընկած վստահությանը, իրավական օգնության որակին և փաստաբանի վարքագծի այն նվազագույն չափանիշներին, որոնք անհրաժեշտ են փաստաբանության նկատմամբ վստահությունն ու հարգանքը պահպանելու համար:

Մեղքի աստիճանը.

Մեղքի աստիճանի առումով Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի վարքագիծը դրսևորվել է դիտավորությամբ:

Փաստաբանը, պարտավոր էր իմանալ Օրենքով և Կանոնագրքով իր վրա դրված պարտականությունների բովանդակությունը, այդ թվում՝ վստահորդին իրավաբանական օգնություն ցուցաբերել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված և ժամանակին, կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին, կազմել համապատասխան փաստաբանական գործ, ինչպես նաև խուսափել այնպիսի վարքագծից, որը կարող է խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունն ու հարգանքը:

Սույն գործով հաստատված հանգամանքները վկայում են, որ Փաստաբանն իր վարքագծով գիտակցաբար չի ապահովել Կանոնագրքով սահմանված մի շարք պարտականությունների կատարումը: Մասնավորապես՝ Փաստաբանը չի ներկայացրել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին կանոնավորապես տեղեկացնելու և բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց տալու վերաբերյալ ապացույցներ, իսկ վստահորդի ներկայացուցչի հետ հաղորդակցության ընթացքում հնչեցրել է կոպիտ և վիրավորական արտահայտություն: Բացի այդ, Փաստաբանը նախկինում արդեն ենթարկված է եղել կարգապահական պատասխանատվության, իսկ որոշման կայացման պահին առկա է չմարված կարգապահական տույժ: Այդ հանգամանքը վկայում է, որ

Փաստաբանը տեղյակ էր Կանոնագրքի պահանջների պահպանման անհրաժեշտության և դրանց խախտման իրավական հետևանքների մասին, սակայն, չնայած դրան, կրկին դրսևորել է փաստաբանական վարքագծի կանոններին հակասող վարքագիծ:

Այսպիսով, Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանը գիտակցել է կամ պարտավոր էր գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը և դրա հնարավոր հետևանքները, սակայն չի ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ այդ վարքագիծը կանխելու կամ իր պարտականությունները պատշաճ կատարելու համար: Հետևաբար Փաստաբանի մեղքը դրսևորվել է դիտավորությամբ, ինչը հաշվի է առնվում կարգապահական տույժի տեսակը և չափը որոշելիս:

Կարգապահական խախտման հետևանքները.

Խախտումների հետևանքների առումով Հանձնաժողովը հաշվի է առնում, որ Փաստաբանի վարքագիծը հանգեցրել է վստահորդի և նրա ներկայացուցչի մոտ իրավական օգնության պատշաճ մատուցման վերաբերյալ հիմնավոր դժգոհության, վստահորդի գործի ընթացքի վերաբերյալ անորոշության, ինչպես նաև փաստաբանական ծառայության նկատմամբ վստահության նվազեցման: Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը հաշվի է առնում, որ գործով չեն հաստատվել այնպիսի անդառնալի կամ առանձնապես ծանր հետևանքներ, որոնք անհրաժեշտ կդարձնեին փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցման նման առավել խիստ կարգապահական տույժի կիրառումը:

Փաստաբանի անձը, առկա տույժերը.

Փաստաբանի անձը գնահատելիս Հանձնաժողովը հաշվի է առնում, որ Տիգրան Սարգսյանը փաստաբան է հանդիսանում 28.11.2015 թվականից: Միաժամանակ, Հանձնաժողովը հաշվի է առնում նաև, որ 2021-2026թթ. ժամանակահատվածում Փաստաբանի նկատմամբ հարուցվել է երկու կարգապահական գործ, որոնցից մեկով կիրառված կարգապահական տույժը մարված չէ: Մասնավորապես, որոշման կայացման պահին Փաստաբանի նկատմամբ առկա է չմարված կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն, որը կիրառվել է Կանոնագրքի 2.7.2, 3.6.1 և 3.13 ենթակետերի խախտումների համար:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանի նկատմամբ նախկինում կիրառված և որոշման կայացման պահին չմարված կարգապահական տույժը սույն գործով պատասխանատվության ինքնուրույն հիմք չի հանդիսանում: Միաժամանակ, Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի ուժով այն ենթակա է հաշվի առնելու կարգապահական տույժի տեսակը և չափը որոշելիս՝ որպես Փաստաբանի անձը բնութագրող հանգամանք, ինչպես նաև նախկին կարգապահական ներգործության բավարար կանխարգելիչ ազդեցություն չունենալու ցուցիչ: Չմարված խիստ նկատողության առկայությունը վկայում է, որ նախկինում կիրառված կարգապահական ներգործության միջոցը բավարար կանխարգելիչ ազդեցություն չի ունեցել, իսկ սույն գործով արձանագրված խախտումները պահանջում են ավելի գործուն կարգապահական արձագանք:

Այս համատեքստում Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի նկատմամբ միայն նկատողություն կամ խիստ նկատողություն կիրառելը բավարար չի լինի կարգապահական պատասխանատվության նպատակներին հասնելու համար: Նման տույժերը, հաշվի առնելով Փաստաբանի նկատմամբ արդեն իսկ առկա չմարված խիստ նկատողությունը և սույն գործով արձանագրված խախտումների բազմաբնույթ բնույթը, չեն ապահովի անհրաժեշտ կանխարգելիչ և ուղղիչ ազդեցություն: Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցման տույժի կիրառումը համաչափ չէ: Թեև Փաստաբանի վարքագծում հաստատվել են մի քանի էական խախտումներ, դրանք իրենց կատարման հանգամանքներով և առաջացրած հետևանքներով չեն հասնում այնպիսի աստիճանի, որը կհամարվեր փաստաբանի կարգավիճակի հետ անհամատեղելի և կարդարացներ ամենախիստ կարգապահական տույժի կիրառումը:

Վերոգրյալի հաշվառմամբ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի նկատմամբ 100.000 ՀՀ դրամի չափով տուգանք կիրառելը համաչափ է կատարված խախտումներին: Նշված տուգանքը, մի կողմից, արտահայտում է արձանագրված խախտումների լրջությունը և ապահովում է կարգապահական ներգործության իրական ազդեցություն, իսկ մյուս կողմից՝ չի հանդիսանում Օրենքով նախատեսված առավելագույն տուգանք և չի գերազանցում խախտումների բնույթին, հետևանքներին ու Փաստաբանի մեղքի աստիճանին համարժեք սահմանը:

Բացի այդ, հաշվի առնելով, որ սույն գործով արձանագրված խախտումները վերաբերում են ոչ միայն իրավական օգնության որակին, այլև վստահորդի հետ հաղորդակցության կանոններին, փաստաբանի մասնագիտական վարքագծին և փաստաբանական էթիկային, Հանձնաժողովը գտնում է, որ տուգանքի հետ մեկտեղ անհրաժեշտ է կիրառել լրացուցիչ տույժի միջոց՝ Փաստաբանին պարտավորեցնելով մասնակցել փաստաբանական էթիկայի և դեոնտոլոգիայի թեմայով լրացուցիչ վերապատրաստման դասընթացների:

Լրացուցիչ վերապատրաստման դասընթացին մասնակցելու պարտավորությունը տվյալ դեպքում ունի ոչ միայն պատժիչ, այլև կանխարգելիչ և ուղղիչ նշանակություն: Այն նպատակ ունի նպաստել Փաստաբանի կողմից փաստաբան-վստահորդ հարաբերությունների, մասնագիտական հաղորդակցության, իրավական օգնության բարեխիղճ մատուցման և փաստաբանական էթիկայի պահանջների վերարժևորմանը:

Այսպիսով, Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Տիգրան Սարգսյանի նկատմամբ որպես համաչափ և անհրաժեշտ կարգապահական տույժ անհրաժեշտ է կիրառել «տուգանք» տույժի տեսակը՝ 100.000 ՀՀ դրամի չափով՝ հաշվի առնելով նախորդիվ կատարված դատողությունները, ինչպես նաև որպես լրացուցիչ կարգապահական տույժ անհրաժեշտ է կիրառել «լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել» տույժի տեսակը՝ իր հաշվին՝ «Դեոնթոլոգիա» թեմայով, 6 ակադեմիական ժամ տևողությամբ: Նշված տույժերի համակցությունը համապատասխանում է կատարված խախտումների բնույթին, դրանց հետևանքներին, Փաստաբանի մեղքի աստիճանին, նրա նկատմամբ առկա չմարված կարգապահական տույժին և փաստաբանին բնութագրող մյուս հանգամանքներին, ինչպես

նաև ապահովում է ողջամիտ համաչափություն Պալատի կողմից հետապնդվող իրավաչափ նպատակի և ընտրված կարգապահական միջոցի միջև:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով նաև Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39-րդ հոդվածի 1-ին մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով և 7-րդ մասով, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով, նույն հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերով՝ Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Տիգրան Աշոտի Սարգսյանի (արտոնագիր՝ թիվ 2004) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝«տուգանք»՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ 6 ամսվա ընթացքում պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով 6 ակադեմիական ժամ ժամաքանակով «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2, 2.7.1, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Տիգրան Աշոտի Սարգսյանի (արտոնագիր՝ թիվ 2004) նկատմամբ հարուցված թիվ ԿԳ-25094 կարգապահական վարույթը Կանոնագրքի 2.11.1 ենթակետի պահանջների խախտման հատկանիշների մասով կարճել:

3. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-25094-2-Ա
01 ապրիլի 2026թ.
ք.Երևան